ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ԵՎ ՇԵՆՔԵՐ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Բնակավայրերի տեղաբաշխումը Զանգեզուրում էլ ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության և թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին։ Այս հանգամանքները տարբեր կերպով են զուգորդված գավառի զանազան մասերում։ Սիսիանում գերիշխում են գրեթե միշտ կլորացած գագաթների մոտից մեղմ խոնարհվող լանջեր, որոնց մեջ բացվող համեմատաբար լայն հովիտները լավ են պաշտպանված քամիներից, այն է՝ Արիքլուի, Այրիչայի, Սիսիանի, Լոր-Դարաբասի հովիտները, և ծածկված են ճոխ մարգագետիններով։ Ոչ մի տեղ սևին չի տալիս պուրակի որևէ խումբ։ Աղբյուրները բխում են լեռնալանջերից։ Բուն Զանգեզուր կոչվող գավառում Եռաբլուրի (Ուչթափալարի) սարահարթի շարունակությունը բաժանվում է լայն փռվող Գորիսի գետահովտով Տեղի սարահարթից։ Երկու սարահարթերը կտրտված են խոր ձորերով։ Քամին անպակաս փչում է երկուսի տափակ մակերեսով՝ ուժեղանալով մանավանդ աշնան վերջին և ձմեռվա ամիսներին, երբ քամին այնքան սաստկանում է, որ փոշու հետ քշում է և հեռու գլորում քարեր. իսկ ձմեռը բարձրացնում է և պտտեցնում օդի մեջ այստեղ մեծ քանակությամբ նստող ձյունը։ Այդ ժամանակ երթևեկությունը դառնում է վտանգավոր, ճամփորդին սպառնում է հաստ ձյան տակ թաղված մնալը։ Այդ վտանգի առաջն առնելու և ճանապարհը ցույց տալու համար հին ժամանակներից կանգնեցրած մնում են քարակույտեր սյուների փոխարեն, որոնք հեռվից լավ աչքի են ընկնում։ Յայջի գյուղի մերձակայքում դեռևս պահպանվել են Օրբելյան իշխանների կառուցած հոյակապ քարվանսարայի ավերակները, որտեղ ճամփորդներն իրենց գրաստներով ապաստան էին գտնում ձմեռվա այդ քամիներից և սարսռեցնող ցրտից։ Աղբյուրներով շատ աղքատ են երկու սարահարթերն էլ, դրանք բխում են այնտեղ, որտեղ Եռաբլուրի (Ուչթափալարի) սարահարթը հատվում է Որոտան (Բազարչայ) գետի արագ վազքով, նույնպես և Տեղի սարահարթը ակոսող ձորերի հատակին։

Ղարաբաղի կենտրոնական Հրաբխային բարձրավանդակի վրա իջնող անձրևների և մանավանդ ձմեռվա ամիսներին ձյան հաստ սավանի հալոցքի ջրերը միայն մի փոքր մասով են հեռանում վերգետնային հոսքի միջոցով՝ հավաքվելով Որոտան (Բազար-չայ) և Հագարու գետերի մեջ։ Մեծագույն մասը